ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Տաթևիկ Մանուշակյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2023 թվականի հուլիսի 10-ից մինչև հուլիսի 21-ը:

3. Հրավիրող կողմը.

Արժույթի միջազգային հիմնադրամ - Վիեննայի միացյալ ինստիտուտ (JVI)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Հարկաբյուջետային կայունություն» (Fiscal Sustainability) թեմայով դասընթացի նպատակն էր ներկայացնել հարկաբյուջետային կայունությունը քաղաքականության և գործիքների տեսանկյունից.

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) ընթացիկ հարկաբյուջետային կայունության մարտահրավերներ,
2) պետական պարտքի դինամիկայի նկարագրությունը և կապը մակրո շրջանակի հետ,
3) պարտք/ՀՆԱ հարաբերակցության կանխատեսումներ,

4) պետական պարտքի թիրախին հասնելու համար հարկաբյուջետային ճշգրտման ուղիներ,

5) պետական պարտքի դինամիկայի ելակետային սթրես-թեստեր,

6) երկարաժամկետ հարկաբյուջետային ճնշումներ՝ կենսաթոշակային, առողջապահության և կրթության ոլորտներում,

7) պարտքի կայունության և բեռի ցուցանիշներ,

8) հարկաբյուջետային ռիսկեր, ճգնաժամեր և ճգրտումներ,

9) կլիմայի փոփոխություն և հարկաբյուջետային խոցելիություններ,

10)կլիմայական ռիսկերի կառավարումը հարկաբյուջետային կայունության համատեքստում,

11) պետական պարտքի դինամիկա և գնաճ.

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացին ներկա են գտնվել թվով 18 երկրներից 30 մասնակիցներ: Այն մեկնարկել է յուրաքանչյուր մասնակից երկրի «Հարկաբյուջետային կայունություն» թեմայով շնորհանդեսների ներկայացմամբ:

Երկշաբաթյա դասընթացն իրականացվել է գործնական խմբային աշխատանքների, քննարկումների, բանավեճերի տեսքով, որոնց ընթացքում պարզաբանվել են հարկաբյուջետային կայունության կարևորությունը մակրոտնտեսական կայունության և կայուն աճի տեսանկյունից, հարկաբյուջետային խոցելիությունները՝ տարբերակելով կարճաժամկետ և երկարաժամկետ ռիսկերը, ճգնաժամերը և հարկաբյուջետային ճշգրտման դեպքերը, ինչպես նաև պարտքի կայունության վերլուծության շրջանակները JVI տարածաշրջանի մի շարք երկրների օրինակի հիման վրա:

Ներկայացված դասախոսությունների հիման վրա դասընթացի ավարտին մասնակիցների առանձին խմբերի կողմից իրականացվել են որոշ երկրների պետական պարտքի վերաբերյալ կանխատեսումներ՝ պարտքի կայունության վերլուծության գործիքի հիման վրա:

Ընդհանուր առմամբ, դասընթացը բավականին հետաքրքիր էր՝ հագեցած գործնական վերլուծական աշխատանքներով և դրանց առնչվող տեղեկատվությամբ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

25.07.2023թ.